

Հաշվետվություն

2023 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Արամ Գուգարաց
Գևորգ Մանուկյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ
Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան, Թբիլիսի, 2023 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը

4. Հրավիրող կողմը.

Վրաստանի արդարադատության նախարարության Հանրային ռեգիստրի ազգային գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

- Մասնակցություն՝ քարտեզագրական նյութերի ստեղծմանը նվիրված աշխատաժողովին,

- Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունում և Նիդերլանդների կադաստրի, հողային ռեգիստրի և քարտեզագրման գործակալությունում ներդրված նորարարական տեխնոլոգիաներին, ծրագրերին և բարեփոխումներին ծանոթացում.

Քննարկված թեմաները.

Քննարկվեցին օրակարգով նախատեսված մասնակից պետությունների քարտեզագրական համակարգում ներդրված և տարածական տվյալների հավաքագրման, մշակման, կառավարման, ինչպես նաև տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման նպատակով կիրառվող նորարարական տեխնոլոգիաներին, կատարվող բարեփոխումներին և ընթացիկ աշխատանքներին վերաբերվող հարցեր:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Թբիլիսիում հանդիպում տեղի ունեցավ Վրաստանի Հանրային ռեզիստրի ազգային գործակալության մասնագիտական ստորաբաժանումների ղեկավարների և ոլորտային պատասխանատուների, ինչպես նաև Նիդերլանդների կադաստրի, հողային ռեզիստրի և քարտեզագրման գործակալության փորձագետների հետ:

Մասնակիցները ներկայացրեցին տարածական տվյալների հավաքագրման, մշակման, կառավարման և քարտեզագրական նյութերի ստեղծման նպատակով իրենց երկրներում իրականացվող աշխատանքների սկզբունքները և առանձնահատկությունները: Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ տարածական տվյալների ստանդարտացմանը, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (գեոպորտալի) ներդրմանը, քարտեզագրական նյութերի ստացմանը և ոլորտում կիրառվող նորարարական տեխնոլոգիաներին վերաբերող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ մասնագիտական հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Վրաստանի Հանրային ռեզիստրի ազգային գործակալության ղեկավարության և Նիդերլանդների կադաստրի, հողային ռեզիստրի և քարտեզագրման գործակալության փորձագետների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձի փոխանակման և քարտեզագրական նյութերի ստեղծման ու տարածական տվյալների կառավարման ոլորտում ավելի սերտ համագործակցության վերաբերյալ:

8. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արամ Գուգարաց

Գևորգ Մանուկյան



13.09.2023 թ.